**ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N <<ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-9/1>>**

ք. Աբովյան <<12>> <<փետրվարի>> 2016 թ.

«Աբովյանի N 9 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Մ. Առաքելյանի, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<«ՎԻՊ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մանուկյանի, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերք /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից

ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 7 562 936 (յոթ միլիոն հինգ հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30/12/2016թ. :

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը[1]:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

[2] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծ: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

9.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.12 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Աբովյանի N 9 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն<br>ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 57/1 | «ՎԻՊ ՖՈՒԴ» ՍՊԸ<br>ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սևանի 2 |
| ՀՎՀՀ 03519738 | ՀՎՀՀ 03507146 |
| ՀՀ 12111980100 | Հ/Հ 2051122072091001 |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ, Աբովյանի մ/6 |
| Մ. Առաքելյան | Գ. Մանուկյան |
| /ստորագրություն/<br>Կ.Տ | /ստորագրություն/<br>Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
<<12>> <<փետրվարի>> 2016 թ. կնքված
N ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-9/1 *ծածկագրով գնման պայմանագրի*

# ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Բ | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 12 | Վարսակաձավար | Վարսակաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14,0%-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5% ոչ պակաս, գործարանային պարկերով, ԳՕՍՏ 5550-74, մակնշումը և փաթեթավորումը՝ ԳՕՍՏ 26791-89: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված "Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: |
| 14 | Վերմիշել | Միաերանգ, առանց կողմնակի համի ու հոտի, պատրաստված անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ըստ ԳՕՍՏ 875-92: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %: |
| 20 | Տոմատի մածուկ | Համասեռ խառնուրդ, առանց մուգ խառնուրդների, կաշվի, կորիզի և այլ խոշոր մասնիկների մնացորդների, առանց կողմնակի համերի և հոտերի: Կարմիր, նարնջակարմիր կամ մորեկարմիր գույների: Բարձր, I և II տեսակների, ապակե կամ մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ$^3$ տարողությամբ, ԳՕՍՏ 3343-89: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի : Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % : |
| 23 | Սխտոր | Փաթեթավորումը՝ մինչև 20կգ պարկերով: ԳՕՍՏ 27569-87, Սովորական տեսակի, անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 29 | Կանաչի խառը | Կանաչի տարբեր տեսակի, օրեկան, թարմ, կապով կամ քաշով, առանց փչացած ու չորացած մասերի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգիե, ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 30 | Միս տավարի տեղական, ոսկոր, ցլիկի | Միս տավարի պաղեցրած, ցլիկի, զուտ մսի տեսակարար կշիռը ընդհանուր քաշի ոչ պակաս քան 60%-ը, զարգացած մկաններով, պահված 0-ից մինչև 12 C° ջերմաստիճանի պայմաններում, բժշկական փաստաթղթերով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, ՀՍՏ 342-2011, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80%: |

| | | |
|---|---|---|
| 33 | Կաթ | Պաստերացված կովի կաթ 3.2 % յուղայնությամբ, թթվայնությունը' 16-21 0T: Անվտանգությունը և մակնշումը' ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված "Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 34 | Մածուն | Թարմ կովի կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-1000T,: անվտանգությունը և մակնշումը' ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 35 | Թթվասեր | Թարմ կովի կաթից, յուղայնությունը' 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը' 65-100 0T, անվտանգությունը և մակնշումը' ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված "Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % |
| 37 | Կաթնաշոռ | Կաթնաշոռ 18 և 9,0% յուղի պարունակությամբ կամ անյուղ, թթվայնությունը' 210-240 T,° փաթեթավորված սպառողական տարաներով, 200-500 գ տուփերով, անվտանգությունը և մակնշումը' ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N1925-Ն որոշմամբ հաստատված "Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 42 | Հալած յուղ, | Յուղ : Անվտանգությունը և մակնշումը' 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % |
| | | **Համեմունքներ** |
| 43 | Թեյ | Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: "Փունջ", բարձրորակ և I տեսակների, ԳՕՍՏ 1937-90 կամ ԳՕՍՏ1938-90: Անվտանգությունը' ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը' "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 45 | Աղացած պղպեղ սև | Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը' ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 46 | Աղացած պղպեղ կարմիր | Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը' ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 47 | Դափնետերև | Չորացրած դափնետերևներ, խոնավության զանգվածային մասը տերևում' 12 %-ից ոչ ավելի, ԳՕՍՏ 17594-81: Անվտանգությունը' ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 48 | Սոդա | Կերակրի սոդա' բարձր տեսակի, Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: |
| 50 | Կիտրոնի աղ | |

| | | |
|---|---|---|
| 57 | Կիտրոն | Թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների, ոչ տձև: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 58 | Ծիրան | Թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների, ոչ տձև: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 66 | Կակաո | Բաց շագանակագույնից մինչև մուգ շագանակագույն գույի փոշի, առանց մոխրագույն հետքերի, առանց կողմնակի համի ու հոտի, 100 գրամի սննդային և էներգետիկ արժեք՝ 27.3 գրամ, ճարպեր՝ 10.0 գր., ածխաջրեր՝ 12.2 գր., վիտամին PP 1.8 մգր., վիտամին B1 0.1 մգր., վիտամին B2 0.2 գր., Na 13մգր., K 1509մգր., ca 128մգր., Mg 425մգր., P655մգր.: Էներգետիկ արժեք 289 կկալ: Պահպանել չոր և զով վայրում /18+3/ C օդի ջերմաստիճանի և 75%-ից ոչ բարձր հարաբերական խոնավության պայմաններում: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % |
| 67 | Կիսել (220 գր) | Կիսել՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:200 գր տուփ: |
| 68 | Մարմելադ | Մարմելադ, թարմեցնող, համասեռ, արտաքին մակերեսը , ձևը, համը և հոտը՝ համապատասխան բաղադրագրի և տեխնոլոգիական հրահանգի, տեղադրված՝ ձևավոր տուփերում, 20 գ-ից ավելի զտաքաշով, ԳՕՍՏ 6477-88 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 70 %: |

**ԳՆՈՐԴ**

«Աբովյանի N 9 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 57/1

ՀՎՀՀ 03519738

ՀՀ 12111980100

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Մ. Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՎԻՊ ՖՈՒԴ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սևանի 2
ՀՎՀՀ 03507146
Հ/Հ 2051122072091001
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Աբովյանի մ/ճ

Գ. Մանուկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2

« 12» «փետրվարի» 2016 թ. կնքված

**N ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ 10/15-9/1** *ծածկագրով գնման պայմանագրի*

## ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | Նախատեսվում է գնել 2016 թ. ընթացքում | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | I V եռամսյակ | | ԸՆԴԱՄԵՆԸ | |
| Չ/Բ | Անվանումը | Չ/մ | | Քանակը | Գումարը | Քանակը | Գումարը | Քանակը | Գումարը | Քանակը | Գումարը | Քանակը | Գումարը |
| 12 | Վարսակաձավար | կգ | 801 | մինչև 10,9 | 8738 | մինչև 16,4 | 13107 | մինչև 16,4 | 13107 | մինչև 16,4 | 13107 | մինչև 60 | 48060 |
| 14 | Վերմիշել | կգ | 510 | մինչև 127,3 | 64909 | մինչև 190,9 | 97364 | մինչև 190,9 | 97364 | մինչև 190,9 | 97364 | մինչև 700 | 357000 |
| 20 | Տոմատի մածուկ | կգ | 822 | մինչև 23,6 | 19429 | մինչև 35,5 | 29144 | մինչև 35,5 | 29144 | մինչև 35,5 | 29144 | մինչև 130 | 106860 |
| 23 | Սխտոր | կգ | 1250 | մինչև 1,82 | 2273 | մինչև 2,7 | 3409 | մինչև 2,7 | 3409 | մինչև 2,7 | 3409 | մինչև 10 | 12500 |
| 29 | Կանաչի խառը | կգ | 1650 | մինչև 9,1 | 15000 | մինչև 13,6 | 22500 | մինչև 13,6 | 22500 | մինչև 13,6 | 22500 | մինչև 50 | 82500 |
| 30 | Միս տավարի տեղական, ոսկրոտ, ցլիկի | կգ | 2520 | մինչև 236,4 | 595636 | մինչև 354,5 | 893455 | մինչև 354,5 | 893455 | մինչև 354,5 | 893455 | մինչև 1300 | 3276000 |
| 33 | Կաթ | լիտր | 402 | մինչև 90,9 | 36545 | մինչև 136 | 54818 | մինչև 136 | 54818 | մինչև 136 | 54818 | մինչև 500 | 201000 |
| 34 | Մածուն | կգ | 660 | մինչև 481,8 | 318000 | մինչև 722,7 | 477000 | մինչև 722,7 | 477000 | մինչև 722,7 | 477000 | մինչև 2650 | 1749000 |
| 35 | Թթվասեր | կգ | 1074 | մինչև 18,2 | 19527 | մինչև 27,3 | 29291 | մինչև 27,3 | 29291 | մինչև 27,3 | 29291 | մինչև 100 | 107400 |
| 37 | Կաթնաշոռ | կգ | 2052 | մինչև 9,1 | 18655 | մինչև 13,6 | 27982 | մինչև 13,6 | 27982 | մինչև 13,6 | 27982 | մինչև 50 | 102600 |
| 42 | Հալած յուղ. | կգ | 1521 | մինչև 120,0 | 182520 | մինչև 180,0 | 273780 | մինչև 180,0 | 273780 | մինչև 180,0 | 273780 | մինչև 660 | 1003860 |
| 43 | Թեյ | կգ | 5640 | մինչև 1,6 | 9229 | մինչև 2,5 | 13844 | մինչև 2,5 | 13844 | մինչև 2,5 | 13844 | մինչև 9 | 50760 |
| 45 | Աղացած պղպեղ սև | կգ | 5100 | մինչև 0,5 | 2782 | մինչև 0,8 | 4173 | մինչև 0,8 | 4173 | մինչև 0,8 | 4173 | մինչև 3 | 15300 |
| 46 | Աղացած պղպեղ կարմիր | կգ | 3360 | մինչև 0,5 | 1833 | մինչև 0,8 | 2749 | մինչև 0,8 | 2749 | մինչև 0,8 | 2749 | մինչև 3 | 10080 |
| 47 | Դափնետերև | կգ | 3300 | մինչև 0,2 | 600 | մինչև 0,3 | 900 | մինչև 0,3 | 900 | մինչև 0,3 | 900 | մինչև 1 | 3300 |
| 48 | Սոդա | կգ | 800 | մինչև 0,4 | 291 | մինչև 0,55 | 436 | մինչև 0,55 | 436 | մինչև 0,55 | 436 | մինչև 2 | 1600 |
| 50 | Կիտրոնի աղ | կգ | 4002 | մինչև 0.1 | 364 | մինչև 0,14 | 546 | մինչև 0,14 | 546 | մինչև 0,14 | 546 | մինչև 0,5 | 2001 |
| 57 | Կիտրոն | կգ | 952 | մինչև 2,0 | 1904 | մինչև 3,0 | 2856 | մինչև 3,0 | 2856 | մինչև 3,0 | 2856 | մինչև 11 | 10472 |
| 58 | Ձիրան | կգ | 390 | մինչև | | մինչև | | մինչև 100,0 | 39000 | մինչև 0,0 | 0 | մինչև 100 | 39000 |
| 66 | Կական | կգ | 5511 | մինչև 2,4 | 13026 | մինչև 3,5 | 19539 | մինչև 3,5 | 19539 | մինչև 3,5 | 19539 | մինչև 13 | 71643 |
| 67 | Կիսել(220գ) | տուփ | 450 | մինչև 73 | 32727 | մինչև 109 | 49091 | մինչև 109 | 49091 | մինչև 109 | 49091 | մինչև 400 | 180000 |
| 68 | Մարմելադ | կգ | 1200 | մինչև 20,0 | 24000 | մինչև 30,0 | 36000 | մինչև 30,0 | 36000 | մինչև 30,0 | 36000 | մինչև 110 | 132000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | | 7562936 |

**ԳՆՈՐԴ**

«Աբովյանի N 9 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

ք. Աբովյան, 4մ/շ 57/1

ՀՎՀՀ 03519738

ՀՀ 12111980100

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Մ. Առաքելյան

(ստորագրություն)

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՎԻՊ ՖՈՒԴ» ՍՊԸ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սևանի 2

ՀՎՀՀ 03507146

Հ/Հ 2051122072091001

«Էնէլոբանկ» ՓԲԸ, Աբովյանի մ/ճ

Գ. Մանուկյան

(ստորագրություն)

Հավելված 2

« 12» «փետրվարի» 2016 թ. կնքված

N ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ 10/15-9/1 *ծածկագրով գնման պայմանագրի*

ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

| Անվանում | Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| Մննդամթերք | 0 | 0 | 756294 | 1512587 | 2268881 | 3025174 | 3781468 | 4537762 | 5294055 | 6050349 | 6806642 | 7562936 | 7562936 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*
* *Վճարումը իրականացվելու է փաստացի մատակարարված ապրանքների դիմաց*

ԳՆՈՐԴ

«Աբովյանի N 9 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

ք. Աբովյան, 4մ/շ 57/1

ՀՎՀՀ 03519738

ՀՀ 12111980100

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Մ. Առաքելյան

(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

«ՎԻՊ ՖՈՒԴ» ՍՊԸ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սնանի 2

ՀՎՀՀ 03507146

Հ/Հ 2051122072091001

«Ինեկոբանկ» ՓԲԸ Աբովյանի մ/ճ

Գ. Մանուկյան

(ստորագրություն)

Հավելված 10

<<ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-9/1>> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N <<ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-9/1>>

<<____>>____________20 թ.

ք. Աբովյան

<<Վիպ Ֆուդ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Գեղամ Մանուկյանի <<000698571, տրվ. 10.04.2013, 001-ի կողմից>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Աբովյանի քաղաքային համայնքի>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Սննդամթերքի ձեռքբերման>> <<ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-9/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը - <<Վիպ Ֆուդ>> ՍՊԸ
Ընկերության հասցեն- ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սևանի 2

Ընկերության բանկի անվանումը -<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Աբովյանի մ/ճ
Ընկերության Հ/Հ -2051122072091001
Ընկերության ՀՎՀՀ -03507146

տնօրեն՝ Գ. Մանուկյան
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ Հ. Պողոսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

## ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N[3]

"_____" _______ 20___ թ.

| | | |
|---|---|---|
| Վճարող՝ <<Վիպ Ֆուդ>> ՍՊԸ<br>ՀՎՀՀ - 03507146 | ԴԵԲԵՏ<br>2051122072091001 | ԳՈՒՄԱՐ<br>756293,6 |
| Վճարողի բանկը՝<br>«Ինեկոբանկ» ՓԲԸ, Աբովյանի մ/ճ | ԿՐԵԴԻՏ | ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ) |
| Շահառու՝ <<Աբովյանի N 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ<br>ՀՎՀՀ - 03519738 | 12111980100 | Յոթ հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր իննսուներեք ամբողջ վեց տասնորդական |
| Շահառուի բանկը՝<br>«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ | հշ.N 12111980100 | |

Գումարը բառերով՝
Յոթ հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր իննսուներեք ամբողջ վեց տասնորդական

Գնման գործընթացի ծածկագիրը ՝ <<ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-9/1>>

Վճարման նպատակը ՝ Տուժանքի համաձայնության դիմաց

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Կից____էջ

| Շահառուի ստորագրությունները | Վճարողի ստորագրությունները |
|---|---|
| /____________________/<br>/____________________/<br>Կ.Տ. | /____________________/<br>/____________________/<br>Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>/____________________/<br><<__>>______20__թ.<br>Կ.Տ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>/____________________/<br><<__>>______20__թ.<br>Կ.Տ |

[3] Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»: